«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2016 թվականի

Գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի մասին

Լսելով և քննարկելով **«Գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **2016-2017 ուսումնական տարվանից սկսած՝ առկա ուսուցման բակալավրիատի 1-ին կուրսի ուսանողների համար կիրառել գիտելիքների գնահատման բազմագործոնային հետևյալ համակարգը.**

Ուսանողի ամփոփ գնահատականը որոշակի առարկայի գծով ձևավորվում է կիսամյակի ընթացքում գնահատման գործոնների և դրանց միավորների հիման վրա՝ հաշվի առնելով հաճախումները և ընթացիկ ակտիվությունը, անհատական աշխատանքը, գիտելիքների միջանկյալ ստուգումը և ամփոփիչ քննությունը: Ուսանողների գնահատումն իրականացվում է 20 միավորային համակարգով, որում անցողիկ շեմը համարվում է 8-ը:

Աղյուսակ 1

Բազմագործոնային գնահատման համակարգի գործոնները և գնահատման միջակայքը

	ԳՈՐԾՈՆՆԵՐ տարբերակված գնահատումով (քննությամբ ավարտվող) անհատական աշխատանք պարունակող դասընթացների համար	Գնահատական
1.	Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն	0-4
2.	Ուսանողի անհատական աշխատանք	0-2
3.	Միջանկյալ ստուգում	0-2
4.	Ամփոփիչ քննություն	0-12

	ԳՈՐԾՈՆՆԵՐ տարբերակված գնահատումով (քննությամբ ավարտվող) անհատական աշխատանք չպարունակող դասընթացների համար	Գնահատական
1.	Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն	0-6
2.	Միջանկյալ ստուգում	0-2
3.	Ամփոփիչ քննություն	0-12

	ԳՈՐԾՈՆՆԵՐ ստուգարքով ավարտվող դասընթացների համար	Գնահատական
1.	Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն	0-12
2.	Ամփոփիչ ստուգում	0-8

Բոլոր գնահատականները գրանցվում են առանց կլորացման, ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ:

Հաճախումների և ընթացիկ ակտիվության բաղադրիչը անհատական աշխատանք պարունակող և քննությամբ ավարտվող դասընթացների համար գնահատվում է 0-4, իսկ անհատական աշխատանք չպարունակող և քննությամբ ավարտվող դասընթացների համար՝ 0-6 միավոր միջակայքում՝ 1,0 միավոր քայլով:

Անհատական աշխատանքի գնահատման նվազագույն քայլը 0,5 միավոր է, ամփոփիչ բանավոր քննության դեպքում՝ 1 միավոր, թեստային ամփոփիչ քննության դեպքում՝ առնվազն 0,25 միավոր:

Գիտելիքների միջանկյալ ստուգումն անցկացվում է գրավոր (եթե անգամ ամփոփիչ քննությունը բանավոր է) տվյալ դասընթացի դասաժամի ընթացքում: Գրավորների գնահատման արդյունքներն ամփոփաթերթ են անցկացվում ամենաուշը հաջորդ աշխատանքային օրը: Գիտելիքի միջանկյալ ստուգումը գնահատվում է 0-2 միավոր միջակայքում՝ նվազագույնը 0,25 միավոր քայլով:

Հաճախումների ցուցանիշն ընթացիկ ակտիվության գործոնի գնահատականի վրա անդրադառնում է հետևյալ կերպ.

Աղյուսակ 2

Ընթացիկ ակտիվության գնահատումը

Հաճախումների ցուցանիշը	Ընթացիկ ակտիվության առավելագույն գնահատականը		
	Որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատա-կանի (տարբերակված գնահատումով (քննությամբ ավարտվող) անհատական աշխատանք պարունակող դասընթացների համար)	Որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատա-կանի (տարբերակված գնահատումով (քննությամբ ավարտվող) անհատական աշխատանք չպարունակող դասընթացների համար)	Որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատականի (ստուգարքով ավարտվող) դասընթացների համար)
80,1-100,0	4	6	12
60,1-80,0	3	4	8
40,0-60,0	2	2	4
Մինչև 40,0	0	0	0

Քննաշրջանում վերահանձնում է կազմակերպվում այն դեպքում, երբ վերջնական հաշվարկային գնահատականի թվային արժեքը փոքր է 8-ից: Վերահանձնումների ժամանակ անհատական աշխատանքի, հաճախումների և ընթացիկ ակտիվության գնահատականները հաշվի չեն առնվում, և ուսանողը դրական գնահատական ստանալու համար պետք է ամփոփիչ քննության 12 միավորից հավաքի առնվազն 5,0 միավոր՝ առանց կլորացման, իսկ ստուգարքով ավարտվող առարկաների դեպքում՝ 8 միավորից՝ առնվազն 3,0 միավոր:

Յուրաքանչյուր դասընթաց գնահատվում է 20 միավորային համակարգով (աղյուսակ 3, 4):

Աղյուսակ 3

Տարբերակված գնահատման սանդղակ

Ավանդական գնահատական	**Գնահատականը 20 միավորային համակարգում**	**Գնահատականի տառային նիշը**
գերազանց	19,1-20	A+
գերազանց	18,1-19,0	A
գերազանց	17,1-18,0	A-
լավ	16,1-17,0	B+
լավ	15,1-16,0	B
լավ	14,1-15,0	B-
բավարար	13,1-14,0	C+
բավարար	12,1-13,0	C
բավարար	8,0-12,0	C-
անբավարար	փոքր է 8-ից	D

Աղյուսակ 5

Ստուգարքով գնահատման սանդղակ

Ավանդական գնահատական	**Գնահատականը 20 միավորային համակարգում**	**Գնահատականի տառային նիշը**
ստուգված	8,0-20	S
չստուգված	փոքր է 8-ից	U

2. **2-4-րդ կուրսերի ուսանողների ընթացիկ ակտիվության գնահատումն իրականացվում է (100 միավորային համակարգով) հետևյալ սանդղակի միջոցով.**

Աղյուսակ 5

Ընթացիկ ակտիվության գնահատումը

Հաճախումների ցուցանիշը	Ընթացիկ ակտիվության առավելագույն գնահատականը		
	Որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատա-կանի (տարբերակված գնահատումով (քննությամբ ավարտվող) անհատական աշխատանք պարունակող դասընթացների համար)	Որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատա-կանի (տարբերակված գնահատումով (քննությամբ ավարտվող) անհատական աշխատանք չպարունակող դասընթացների համար)	Որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատականի (ստուգարքով ավարտվող) դասընթացների համար)
80,1-100,0	20	32	60
60,1-80,0	15	20	40
40,0-60,0	10	10	20
Մինչև 40	0	0	0

3. **Մեծաթիվ բացակայությունների դեպքում ուսանողի նկատմամբ կիրառվում է կարգապահական տույժ (նկատողություն, խիստ նկատողություն): Առկա ուսուցման բակալավրիատի ուսանողը հեռացվում է համալսարանից 180 ժամ, իսկ առկա ուսուցման մագիստրատուրայի ուսանողը՝ 120 ժամ բացակայելու դեպքում:**

4. Ուժը կորցրած ճանաչել գիտական խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 5-ի «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 19-ի որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերը:

5. **Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

19.10.2016 թ.